| Գուղատնտեսության ոլորտին տրամադրվող տոկոսադրույքների սուբսիդավորմամբ վարկ | | |
|---|---|---|
| **Վարկի նպատակը*** | – մեղվամայրերի, մեղվաընտանիքների, ինչպես նաև փեթակների ձեռքբերում,<br>– անասնաշենքերի կառուցում և տեխնոլոգիական ապահովում,<br>– գյուղատնտեսական կենդանիների ձեռքբերում,<br>– անասնակերի ձեռքբերում,<br>– սերմերի, սածիլների և տնկիների ձեռքբերում,<br>– գյուղատնտեսական նշանակության հողի ձեռքբերում,<br>– հողի և գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության, ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ շրջանառու միջոցների և ծառայությունների ձեռքբերում,<br>– տնամերձ հողամասերում ոռոգման արդիական համակարգերի ներդրում,<br>– ագրովերամշակման ոլորտի արտադրական նշանակության շենքերի, շինությունների կառուցում և վերակառուցում: | |
| *«Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագրի» շրջանակում ապահովագրվող մշակաբույսերի ցանկում ներառված պրոդուկտների մշակության նպատակով վարկավորված շահառուները վարկային պայմանագիրը կնքելուց հետո պետք է ներկայացնեն տվյալ կամ առաջիկա գյուղատնտեսական տարվա համար ապահովագրական ընկերության հետ կնքված գյուղատնտեսության ապահովագրության պայմանագրի պատճենը: | | |
| **Վարկի արժույթ** | **ՀՀ դրամ** | |
| **Վարկի գումար** | **3.000.000** | **3.000.001-15.000.000** |
| **Վարկի ժամկետ** | **24-36 ամիս** | **36 ամիս** |
| **Վարկի տարեկան անվանական տոկոսադրույք** | **12.9%** | **12.25%** |

| | | |
|---|---|---|
| ❗ Վարկի ոչ նպատակային օգտագործման կամ ներկայացված կեղծ տեղեկատվության ի հայտ գալու դեպքում վարկը կհանվի վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրից և վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը կփոփոխվի՝ սահմանվելով 24%: | | |
| **Տարեկան փաստացի տոկոսադրույք** | **13.67%** | **13.24%-14%** |
| **Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում** | ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը տնտեսավարողներին տրամադրվեն 0% տոկոսադրույքով, գյուղատնտեսական կոոպերատիվների վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականցվի այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը տնտեսավարողներին տրամադրվեն 3% տոկոսադրույքով, հանրապետության մնացած համայնքների համար սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով որպեսզի վարկերը տնտեսավարողներին տրամադրվեն 5% տոկոսադրույքով: | |
| **Վարկի տրամադրման վճար** | **Չի պահանջվում** | |
| **Տոկոսադրույքի և/կամ մայր գումարի վճարման արտոնյալ ժամկետ** | **Մինչև 6 ամիս** | |
| **Ապահովման միջոց/Գրավի առարկա** | ✓ Առնվազն 2 ֆիզիկական անձանց (18-65 տարեկան) կամ ԱՁ-ների երաշխավորություններ, որոնք չունեն գործող ժամկետանց պարտավորություններ<br>✓ Երաշխավորներից **առնվազն մեկը** պետք է հանդիսանա անշարժ գույքի սեփականատեր կամ ապահովված լինի գրանցված աշխատավարձով:<br>✓ Երաշխավորներից յուրաքանչյուրի **վերջին մեկ տարում** ունեցած ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը:<br>✓ Վարկային Կոմիտեի որոշմամբ կարող են նախատեսվել նաև այլ ապահովման միջոցներ | ✓ Անշարժ գույք և/կամ տրանսպորտային միջոց*, գյուղտեխնիկա**<br>✓ Ֆիզիկական/Իրավաբանական անձի երաշխավորություն<br>✓ Վարկային Կոմիտեի որոշմամբ կարող են նախատեսվել նաև այլ ապահովման միջոցներ: |

| | |
|---|---|
| *Ավտոմեքենա | Ավտոտրանսպորտային միջոց, որի արտադրման տարեթիվը գրավադրման պահին չպետք է լինի ավելի հին, քան՝<br>✓ ռուսական արտադրության ավտոմեքենաների համար՝ 5 տարի,<br>✓ այլ երկրների արտարդրության ավտոմեքենաների համար՝ 10 տարի: |
| **Գյուղտեխնիկա | Կոմբայն, տրակտոր, բեռնատար, էքսկավատոր և այլ տեխնիկա, որոնց ընդունելիության չափանիշները որոշում է կազմակերպությունը: |
| **Վարկ/Գրավ առավելագույն արժեք** | Գրավի իրացվելի արժեքի առավելագույնը **70%**-ի չափով |
| **Գրավի գնահատում** | Գրավը ենթակա է գնահատման Կազմակերպության հետ համագործակցող գույքի գնահատում իրականացնող անկախ գործակալության և/կամ Կազմակերպության աշխատակցի կողմից:<br>**Կազմակերպության աշխատակցի կողմից գնահատումն իրականացվում է անվճար:** |
| ***Ժամկետանց մայր գումարի տույժ*** | *0.1% օրական* |
| ***Ժամկետանց տոկոսի տույժ*** | *0.13% օրական* |
| **Վարկի վաղաժամկետ մարման տույժ** | ✓ *Վարկառուն իրավունք ունի ժամկետից շուտ կատարելու վարկի ամբողջական կամ մասնակի մարում*<br>✓ *Վաղաժամկետ մարման տույժ* ***Չի կիրառվում*** |

| | | |
|---|---|---|
| *Այլ փուգանքներ* | ✓ **5 օր անընդմեջ ժամկետանցության** դեպքում կիրառվում է տուգանք 1%-ի չափով՝ վարկի մնացորդի նկատմամբ<br>✓ Գումարի **ոչ նպատակային օգտագործման** դեպքում կիրառվում է տուգանք 100,000 ՀՀ դրամի չափով | ✓ **5 օր անընդմեջ ժամկետանցության** դեպքում կիրառվում է տուգանք 1%-ի չափով՝ վարկի մնացորդի նկատմամբ, բայց ոչ ավել քան 50,000<br>✓ Գումարի **ոչ նպատակային օգտագործման** դեպքում կիրառվում է տուգանք.<br>➢ մինչև 6 մլն դրամը ներառյալ վարկերի դեպքում՝ 100,000 դրամ,<br>➢ 6-15 մլն դրամը ներառյալ վարկերի դեպքում՝ 250,000 դրամ, |
| **Վարկառու** | **18-65 տարեկան Ֆիզիկական անձ, ԱՁ, Իրավաբանական անձ** | |
| **Մարման եղանակ** | ✓ **Անուիտետային /մայր գումարի և տոկոսագումարի ամենամսյա հավասարաչափ վճարում/**<br>✓ **Դիֆերենցված/ Մայր գումարի ամենամսյա հավասարաչափ և տոկոսագումարի ամենամսյա վճարում/**<br>✓ **Անհատական վճարումների ժամանակացույց** | |

## Ծանոթություն

**1.** Երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունները և դրանց վճարներն են.

2.1. Անշարժ գույքի՝ այդ թվում հողամասի, գրավադրման դեպքում.
- ✓ Անշարժ գույքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկանք՝ 500-10,000 ՀՀ դրամ,
- ✓ Գրավի պետական գրանցման վճար՝ 2,000-26,000 ՀՀ դրամ,
- ✓ Նոտարական վավերացման վճար՝ 1,500-20,000 ՀՀ դրամ:

2.2. Ավտոմեքենայի գրավադրման դեպքում.
- ✓ Ավտոտրանսպորտային միջոցի սահմանափակումների մասին տեղեկանք՝ 3,000-4,000 ՀՀ դրամ,
- ✓ Գրավի պետական գրանցման վճար՝ 2,000-3,000 ՀՀ դրամ,
- ✓ Նոտարական վավերացման վճար՝ 11,000-12,000 ՀՀ դրամ:

**2.** Անկախ սույն պայմաններում նշված 3-րդ անձանց վճարների դրույքաչափերից, վերջիններիս կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները կարող են փոփոխվել:

**3.** Վարկի տոկոսները հաշվարկվում են վարկի աշխատող (ոչ ժամկետանց) մնացորդի նկատմամբ՝ ելնելով տարում 365 օրվա հաշվարկից:

**4.** Վարկը տրամադրվում է կանխիկ, անկանխիկ, միանվագ եղանակով:

**5.** Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանվում է առանձին Հավելվածով:

**6.** *Վարկը տրամադրվում է Կազմակերպության «Շրջանային», «Ավան», «Դավթաշեն», «Կոմիտաս», «Էրեբունի», «Հարավ-Արևմտյան», «Արմավիր», «Արտաշատ», «Մասիս», «Գորիս», «Գյումրի», «Վանաձոր», «Աբովյան», «Հրազդան», «Էջմիածին», «Մարտունի», «Աշտարակ», «Իջևան», «Վեդի», «Արթիկ», «Եղեգնաձոր», «Կապան» մասնաճյուղերում:*

7. Վարկի տրամադրման դրական որոշման կայացման գործոններն են.
   - ✓ Վարկառուի, Գրավի և Երաշխավորի համապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին,
   - ✓ Վարկառուն վարկի տրամադրման պահին չպետք է ունենա ժամկետանց վարկային պարտավորություններ,
   - ✓ Վերջին մեկ տարում ունեցած ժամկետանց պարտավորությունների օրերի հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրը,
   - ✓ Ֆիզիկական անձ վարկառուն պետք է հանդիսանա Անշարժ գույքի սեփականատեր:

8. Վարկի մերժման գործոններն են.
   - ✓ Վարկառուի և/կամ Գրավի և/կամ Երաշխավորի անհամապատասխանությունը սույն փաստաթղթով սահմանված պահանջներին:

9. Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացում, Վարկառուին տեղեկացում մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում:

10. Վարկի տրամադրում՝ պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո մինչև 2 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Վարկի մարման նպատակով մուտքագրված ցանկացած գումար որպես կանոն Կազմակերպության կողմից ուղղվում է մուտքագրման պահին առկա՝ Հաճախորդի կողմից Կազմակերպությանը Վարկային պայմանագրի ուժով վճարման ենթակա գումարների, այդ թվում՝ տույժերի, սպասարկման վճարների, տոկոսների, Վարկի գումարի մարմանը: Կազմակերպությունն իրավունք ունի Հաճախորդի հետ կնքվող պայմանագրում վճարման ենթակա գումարների այլ հերթականություն սահմանել:

*12. Հաճախորդի կողմից վարկի վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում են վարկի տոկոսագումարները, առկայության դեպքում նաև սպասարկման վճարները, եթե վերջինս հաշվեգրվում է օրական կտրվածքով, իսկ 3-րդ անձանց կատարված վճարները ենթակա չեն նվազեցման:*

13. Ոչ ֆինանսական ծառայությունների սակագները, այդ թվում քաղվածքների, պայմանագրերի կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները հրապարակված են Կազմակերպության պաշտոնական կայքում՝ www.fastcredit.am, ինչպես նաև տեղադրված են Կազմակերպության գործունեության վայրերում:

14. **ԶԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ:**

15. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:**

16. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՏԵՂԱԴՐՎԱԾ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ (www.fastcredit.am):**

17. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:**

18. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:**

19. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱԶՄԿԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ՁԵԶ ԿՏՐԱՄԱԴՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:**